

ԲԱՐԻ ՆԱԽԱՉԵՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՂՐԵՅ ՇՈՒԳԱՐՈՎԸ «ՀՈՎԿԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏԱՆԸ» ԿՆՎԻՐԻ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՂԱՆԵՐԿ ԴԻՄԱՆԿԱՐԸ



Շնորհաշատ նկարիչ Անդրեյ Շուգարովը, իր մտերիմ ընկեր, ծնունդով թբիլիսցի Կարլեն Կարապետյանի հետ, ով երեսնամյա հայտնի «Կարլենոն» նկարչական Արտգլխարկային հիմնադրում է, ժամանելու է Թբիլիսի եւ Կիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Գեորգի եպիսկոպոս Դավթյանի տնօրինությամբ թեմի «Պարիս. Թումանյանի տուն-գիտաընկերության կենտրոնին» նվիրելու է Յուզեմովի Թումանյանի դիմանկարը:

Վրաստանում շատերս Անդրեյ Շուգարով մերօրյա գեղանկարչի մասին կամ շատ քիչ բան գիտենք, կամ ընդհանրապես չգիտենք, սակայն դա պայմանավորված է միմիայն արվեստագետի համեստ բնավորությամբ: Միաժամանակ, հաստատ գիտենք, որ Շուգարով ազգանունը Վրաստանում շատ տարածված է, բայց հայտնի է ազգանվան ծագումնաբանությունը, որը, ըստ մեկնաբանություններից մեկի, առաջացել է հունգարական sugar «ճաշակ»-ը, «լար» նշանակությամբ բառից: Իսկ երկրորդ վարկածով ազգանունը եղել է «Աշուղյան», այդ նրա նախնիները մոտ 100 տարի առաջ, ազգանունից հեռացրել են «Ա»-ն, դարձրել՝ «Շուղարյան», ռուսերեն՝ «Շուգարով»: Երեւի կռահեցիք, մեր այսօրվա հերոսի նախնիները եւս ապրել ու արարել են Վրաստանում, ինքն էլ ծնունդով Թբիլիսիից է: Նրա պապը՝ զնդապետ Անդրեյ Արկադիի Շուգարովը, զինվորական բժիշկ էր ու երկար տարիներ ծառայել է Բորժոմիում: Ի դեպ, այդ տոհմի մեզ քաջածանոթ անուններից է Վրաստանի խորհրդարանի 4-րդ եւ 5-րդ գումարման անդամ, Ախալբալաքիի շրջանի նախկին առաջին քարտուղար (1977-1984 թթ.) Գիվի Շուգարովը: Հայտնի է նաեւ, որ Անդրեյի եղբայրը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալն էր, ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանը:

Ինչեւէ, անդրադառնալով Անդրեյ Շուգարով-մարդ-գեղանկարչին ու ներկայացնենք նրա անցած կյանքի ճանապարհը: Ինչպես նշեցինք, նկարիչը ծնվել է Թբիլիսիում, 1958 թվականին: Վեց տարեկանում ընտանիքը տեղափոխվել է Երեւան, որտեղ էլ նա ստացել է միջնակարգ կրթություն ու 1975-1982 թթ. սովորել է ավարտել է տեղի Գեղարվեստի ակադեմիան: Նկարել սկսել է 4-5 տարեկանում: Առաջին նկարը տատի օգնությամբ նկարված կատաղի մեծ շունն էր: Վարպետը պատմում է, որ մանուկ հասակում նրա նկարչական ձիրքը նկատել է տաղանդաշատ նկարիչ Գարիկ Սմբատյանը, ով մտերմություն էր անում Շուգարովների ընտանիքի հետ եւ ամուր հիմք է դրել հետագա զարգացման համար: Անդրեյ Շուգարովն իր ձեռքբերումների ու հաջողությունների համար երախտապարտ է ուսուցիչներին, հայ կերպարվեստի պայծառ ներկայացուցիչներ Վաղինակ Ալանյանին, Էդուարդ Իսաբեկյանին, Ռոմանոս Սարգսյանին, Վառձապուի Շաքարյանին, Ռուբեն Այվազյանին... Մեծ է եղել նաեւ ծնողների հոգատար վերաբերմունքն ու հատկապես հոր՝ Արկադի Շուգարովի՝ հզոր ինտելեկտի ու տաղանդի տեր մարդու դերը: Նա 70-80-ական թվականներին եղել է Երեւանի Ալ. Բրյուսովի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր, եւ իր հանրագիտարանային գիտելիքներն ու մարդկային բարձր արժանիքները փոխանցել է ոչ միայն որդուն, այլ բուհական բազում սերունդներին:

Շնորհաշատ նկարիչը ներկայանում է կերպարվեստի բոլոր ժանրերով՝ նատյուրմորտ, բնանկար, դիմանկար, գծանկար, իսկ վերջերս ստեղծում է նաեւ արտարկտ նկարներ: Դիմանկարը նրա սիրելի ժանրերից է եւ առաջինը կերտել է բարի ու ազնիվ պապին:

Դիմանկարն ինձ համար կարեւոր է այն առումով, որ պիտի համահունչ լինի բնորդի կամ բնորդուհու արտաքինի, էություն, բնավորության ու, առհասարակ, կերպարի հետ: Եթե այդ ամենը կա, ուրեմն նկարը հրաշալի է,- նշում է նկարիչը: Նրբաճաշակ ստեղծագործողի ներկայանակում գերիշխում են դեղին-շագանակազույն երանգները: Նրա կտավներին բնորոշ են շեշտված վրձնահարվածները, շարժումը: Առկա է նաեւ ստեղծագործական ազդեցիկ, որն իր մեջ կրում է մեծ էներգիա ու դիտողին փոխանցում «իրական կյանքի համը», համոզված է վարպետը: Բազմաթանր նկարչի գործերի շարքում առանձնահատուկ տեղ ունեն ձեռքի վերաբերյալ նկարները: Այդ կոմպոզիցիաները դարձել են Շուգարովի այցեքարտն ու ներկայացված են անհավանական ակտիվության ու ռիթմի մեջ: Իսկ ձիու նկատմամբ սերը գալիս է ծննդավայր Թբիլիսիից, որի փողոցներում հաճախ է հանդիպել այդ գեղեցիկ կենդանուն: Թեմայի մեջ խորացել է՝ երբ ճակատագրի բերումով 4 տարի ապրել է Փարիզում: Համագործակցելով տարբեր սալոնների հետ՝ նկարիչը պատկերներ է ստացել կտավներում ներկայացնել ձիու կյանքը շարժման մեջ:

Գաղտնիք չէ, որ կանայք միշտ էլ մեծ դեր են ունեցել նկարիչների համար, քանի որ ընկալվել են որպես կյանքի արարչական սկիզբ, գեղեցկության, նրբագեղության մարմնացում: Պարոն Անդրեյի դեպքում էլ է այդպես: Նրա համար կինը հետաքրքիր է՝ որպես կերպար ու օբյեկտ, որին ուսումնասիրում է նկարչի ու հոգեբանի տեսանկյունից: Խոստովանում է, որ իր կյանքում մեծ դեր ունի նաեւ տիկինը՝ Ռուզաննան, իր խորհրդավոր, գեղեցիկ, հաճախ կամակոր, եւ ընդհանրապես բոլոր դրսևորումներով: Ու հաճախ էլ կնոջ կերպարն արարում է հենց այդ տպավորությունների մեջ:

Անդրեյ Շուգարով-նկարիչն իրեն երջանիկ մարդ է համարում, որ ունի հրաշալի աջակիցներ՝ ի դեմս կնոջ եւ դստեր: - Ճիշտ է, ունեցել եմ դժվարություններ, սակայն դրական գերիշխող է,- ասում է վարպետը: Գոհ է կյանքից նաեւ, որ ունի արվեստանոց, լավ ընկերներ, որոնք, ինչ էլ պատահի, միշտ իր կողքին են:

Տաղանդաշատ նկարիչը փաստում է, որ զղջման ոչ մի զգացում չկա, չունի ու, երբ գնա այս աշխարհից, կգնա, որպեսզի կրկին վերադառնա: Իսկ, երբ վերադառնա... «... Նույն ձևով կապրեմ, կրկին նկարիչ կ'ստանամ, կրկին կ'հանդիպեմ իմ կյանքի ուղեկցին՝ Ռուզաննային...»:

Հավելենք, որ Անդրեյ Շուգարովը տարբեր տարիներին անհատական ցուցահանդեսներ է ունեցել Վրաստանում, Հայաստանում, Մոսկվայում, Իրանում, Սանկտ Պետերբուրգում, Բեյրութում, Բուլղարիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում եւ այլուր: Նրա աշխատանքները պահվում են ինչպես տարբեր թանգարաններում, այնպես էլ՝ մասնավոր հավաքածուներում:

ԿՈՒՐԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՆՈՅԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԵՐԱՆԳՆԵՐԸ



Ծնունդով թբիլիսցի, 79-ամյա գեղանկարիչ Գեորգ Մանոյանի արվեստն աչքի է ընկնում իր թեմատիկ բազմազանությամբ:

Վիրահայ մշակութասեր հասարակայնությունը, ինչպես անհատական,

այնպես էլ՝ խմբային ցուցահանդեսների ժամանակ առիթ է ունեցել ծանոթանալ ու վայելել արվեստի այդ գործերից ստացած բերկրանքը: Նկարչն առանձնահատուկ սեր ունի իր հարազատ քաղաքի, նրա հնամենի պատմության, ավանդույթների ու անկրկնելի գեղեցկության հանդեպ: Ու այդ է պատճառը, որ տարիներ շարունակ անդրադարձել է այդ թեմային եւ արարել իր ու մեր քաղաքի անկրկնելի մանուկանական տարբերությունը: Եվ այնքան էլ երկար ժամանակ չէ, ինչ նա բնակություն է հաստատել Ամերիկայում, սակայն կապը ծննդավայրի հետ չի կտրում: Թբիլիսիում գտնվող արվեստագետը, այցելելով Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանին եւ, ստանալով նրա օրհնությունը, թեմի «Յուզեմովի Թումանյանի տուն-գիտաընկերության» կենտրոնին» նվիրեց Թբիլիսի Սուրբ Գեորգ եկեղեցու յուղանկար աշխատանքը:

Էջը պատրաստեց ԿՈՒՐԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ռավար ձեռով:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԿՍՎԵԼ Ե ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՄԸ



ԾՆԱՅԵՆԻՄՈՅ, ՁՅՅՏԵՆՆԵՐԻ ԵՎ ԱՅՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՄԸ

2024 թվականի սեպտեմբերի 2-ից սկսվել է մասնագիտական կրթության ծրագրերին գրանցվելու գործընթացը, որը կավարտվի ընթացիկ տարվա սեպտեմբերի 22-ին:

Գրանցվել հնարավոր է ինչպես առցանց՝ vet.emis.ge կայքէջում, այնպես էլ՝ Վրաստանի տարածքով գործող մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում: 2024 թվականին ավելացել է ինտեգրված ծրագրերի քանակը, ինչը բազային կրթություն ունեցող անձանց հնարավորություն է տալիս, մասնագիտական կրթության հետ մեկտեղ, ստանալ լրիվ ընդհանուր կրթություն: Նշյալ ծրագրերի ավարտից հետո, տրվում է մասնագիտական դիպլոմ, որը հավասարազոր է լրիվ ընդհանուր կրթության վկայագրին (ատեստատին), եւ, ցանկության դեպքում, հնարավոր է ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Ընթացում է նաեւ դուալ (երաշխավորված աշխատանքով) մոտեցմամբ իրականացվող ծրագրերի գրանցումը: Դուալ կրթությունը կրթական հաստատության եւ ընկերության միջոցառումների օգնությամբ կիրառվում է եմթադրում: Ծրագրով նախատեսված ուսման արդյունքների 50 տոկոսը եւ ավելին ձեռք է բերվում իրական աշխատանքային միջավայրում կոնկրետ ընկերությունում:

2024 թվականին առաջարկվող մասնագիտական կրթական հաստատությունների եւ ծրագրերի լրիվ ցանկին ու գրանցման հրահանգին կարող եք ծանոթանալ vet.emis.ge կայքէջում:

Մասնագիտական ծրագրերի հետ կապված խորհրդատվություն ստանալու համար կարող եք զանգահարել թեժ գիծ՝ (+995 32) 2200 220 հեռախոսահամարով կամ գրավոր դիմել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ info@emis.ge:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Ե ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համաձայն «Մասնագիտական կրթության վերաբերյալ» Վրաստանի օրենքում մտցված փոփոխությունների, Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարարի հրամանով հաստատվել է մասնագիտական կրթության հեռավար ուսուցման իրականացման կարգն ու պայմանները:

Ըստ փաստաթղթի, սահմանվել են հեռավար ուսուցման սիմիլոն (համաժամ) եւ ոչ սիմիլոն ձևերը: Կարգը նախատեսում է նաեւ մասնագիտական կրթական չափորոշիչով ծրագրի այն բաղադրիչների սահմանումը, որոնցով հնարավոր կլինի հեռավար ուսուցում եւ/կամ գնահատում:

Հաստատվել է այն մասնագիտական պատրաստման/մասնագիտական վերապատրաստման ծրագրերի ցանկը, որոնք հիմնված չեն մասնագիտական կրթական չափորոշիչի վրա, եւ որոնց իրականացումը հնարավոր է լրիվությամբ հեռավար ձևով:

Նշյալ կարգի հիման վրա, քուլեջներին ու մասնագիտական պատրաստման եւ մասնագիտական վերապատրաստման պրոբլեմներին (մատակարարողներին) առաջին անգամ հնարավորություն է տրվել՝ մասնագիտական ուսանողներին եւ ունկնդիրներին հեռավար առաջարկել մասնագիտական ծրագրերի բաղադրիչներ, իսկ որոշ դեպքերում՝ մասնագիտական պատրաստման/մասնագիտական վերապատրաստման ծրագրեր իրականացնել լրիվությամբ հեռավար ձևով:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ԱՅԼԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ ՈՒՏԵԼ, ԵԹԵ...

Հոգնել եմ սահմանափակումներից... Հենց գնում ես բժշկի մոտ. սկսվում է. սա չի կարելի. նա չի կարելի... Իսկ ի՞նչ է կարելի: Հենց ինչ-



-որ հիվանդություն են գտնում, սկսում են սա չուտես, սա ընդհանրապես չի կարելի... Հեղափոխություն ունի ճաշացուցակ կոնկրետ հիվանդությունների համար:

Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ախալքալաքի մունիցիպալիտետ

Այո, նման այսպես կոչված ճաշացուցակ գոյություն ունի: Ահավասիկ.

Շաբաթախաղի դեպքում օգտակար են լոբին, ոսպը, կաղամբը, դարչինը, թարմ ձուկը, սոխը կոծապղպեղը, սուրճը, գետնախնձորը:

Ստամոքսի խոցի դեպքում՝ կաղամբի հյութը, թուզը, կանաչ թեյը, բանանը, պղպեղը, նուշը, ջրիմուռները,

կոծապղպեղը:

Երկամային քարերի դեպքում աշխատեք շատ օգտագործել գորշ բրինձ, սոյա, ձմերուկ, բանջարեղեն, մրգեր, ձախարեղեն, ձուկ: Չի կարելի քաղցրեղեն, քաղցր հյութեր:

Ասթմայի դեպքում առավելակապես օգտակար են յուղոտ ձուկը, սոխը, մրգերը, կարմիր պղպեղը: Խեղդոցի դեպքում օգնում է սուրճը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԵՐԱԶՈՒՄ ՓՈՂ ԵՄ ՏԵՍՆՈՒՄ...



Հեղափոխություն է ի՞նչ կարող է նշանակել երազում փող տեսնելը: Տարբեր երազահաններում տարբեր բացատրություններ կան, մեկը մյուսին ժխտող: Հեղափոխություն է չէր աղբյուրներում ի՞նչ բացատրություն է տրվում դրան: Վ.Ս.

Բուհիսի մունիցիպալիտետ

Երազում փող տեսնելը, իրոք, տարբեր մեկնաբանություններով է բացատրվում: Ստորելներկայացնում ենք մի քանիսը.

Շ ա հ ա դ ի տ ա կ ա ն հ ե տաքքրությունը վկայում է այն երազը, որտեղ դրամ եք կուլ տալիս:

Դրան հաշվելը նույնպես բարեգործություն է:

Մանր, փայլուն դրամներ տեսնելը գուշակում է անբավարարություն գործերում, կարող են ծառայողական տհաճություններ լինել, մտերիները ձեզ կմեղադրեն առեմնության մեջ:

Մանր դրամների կորուստը գուշակում է անհաջողություն:

Գտած փողերը խոստանում են բարեհաջող հեռանկարներ:

Ոսկե դրամները նշանակում են ծաղկում եւ բավարարվածություն, սպասվում են հետաքրքիր ուղեւորություններ եւ ճանապարհորդություններ:

Արծաթյա դրամներ տեսնելը, ընդհակառակը, նշանակում է անհաջողություններ եւ ընտանեկան գծողություններ:

Պղնձյա դրամները գուշակում են այլալվածություն, շփոթվածություն, ֆիզիկական ծանրաբեռնվածություն:

Երազում փող գտնելը նշանակում է մանր անհանգստություններ, բայց մեծ երջանկություն: Փոփոխություններ են լինելու:

Փող բաժանելը (մուծելը) անհաջողություն է:

Կորցրած փողերը զգուշացնում են դժբախտության ու փորձանքի մասին:

Սեփական փող հաշվելը եւ պակասորդ հայտնաբերելը նշանակում է տհաճություններ կույրենաք մուծողների հետ:

Մեծ քանակությամբ փող հաշվելը միշտ բարի է: Դա երջանիկ փոփոխությունների եւ լիության նշան է:

Եթե պարտք եք խնդրում, ձեզ հոգսեր են սպասվում թվացող բարգավաճման զգացման ընթացքում:

Փող տնտեսելը հարստության լիակատար ու կենսական հարմարավետության նշան է:

Ուրիշի փողերը ծախսելը զգուշացնում է հեռու մնալ մանր խաբեությունից, որի պատճառով կարող եք կորցնել ձեր ընկերոջը:

Փողերի կեղծումը շատ վատ կանխագուշակում է:

Երազում փող գողնալը՝ նշանակում է վտանգի մեջ եք եւ պետք է ավելի ուշադիր հետեւեք ձեր գործողություններին:

ԻՆՉՊԵՆ ՆԱԽԱՊԱՏՐՎԱՍՏԵԼ ԵՐԵՒԱՅԻՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Ամեն տարի ամառային արձակուրդները թռչում են՝ ինչպես մեկ ակնթարթ: Դպրոցականների ծնողները նոր ուսումնական տարվան պատրաստվելու համար մի շարք խնդիրների առաջ են կանգնում՝ ի՞նչ գնել, ինչպե՞ս երեխային վաղ առավոտյան արթնացնել, ինչպե՞ս տրամադրել տնային առաջադրանքներ կատարել եւ այլն:

Ստորեւ կպատմենք այն մասին, թե ինչպես հեշտացնել նախապատրաստումը նոր ուսումնական տարվան, ինչպես նաեւ հեշտությամբ մտնել դպրոցական առօրյա կյանք:



Գեղեցիկ գրեմական պիտույքների գնում

Երեխաները սիրում են վառ ու հետաքրքիր գրեմական պիտույքներ, որոնք ավելի գունեղ են դարձնում ուսումնական գործընթացը: Տարբեր տեսակի գրիչներ, մատիտներ՝ նրանց սիրելի կերպարներով, գունավոր ռետիններ, ֆլումաստերների գեղեցիկ հավաքածու:

Դպրոցական հագուստի ընտրություն

Չազուստ գնելիս՝ երեխան պետք է ինքնուրույն ընտրի այն, ինչ իրեն դուր է գալիս, ինչը հարմար կմտնի նրա մարմնին եւ չի սահմանափակի շարժումները:

Ինքնավստահության գրավականներից մեկը հարմար հագուստն է, որում մարդն իրեն ավելի լավ է զգում:

Որակյալ պայուսակի գնում

Տարրական դասարանների աշակերտների համար նախընտրելի է ձեռք բերել ուսապարկ, որը թույլ է տալիս պահպանել կեցվածքը: Ուսապարկը նաեւ այլ առավելություններ ունի. իր խիտ դիզայնի շնորհիվ ներսի ուսումնական պարագաներն ավելի քիչ են վնասվում, ինչը նշանակում է, որ տետրերն ու գրքերը կպահպանվեն անձրեւի ժամանակ: Մեր օրերում պայուսակներ կարելի է գտնել գրեթե ցանկացած մուլտիտերմոսով, նախշով ու գույնով:

Քնի հստակ ռեժիմի մշակում

Մարդու ուղեղում սովորությունն ամրագրվում է 3 շաբաթում՝ ամենօրյա պարկտիկայից հետո, ինչը նշանակում է, որ պետք է նախօրոք հոգ տանել քնի ժամանակացույցի մասին: Սովորեցրեք ձեր երեխային քնել երեկո:

Շատ հաճախ ծնողին թվում է, թե երեխան շատ շուտ պետք է հարմարվի նոր միջավայրին, հեշտ ու արագ ներգրավվի դասապրոցեսին, չունենա խնդիրներ, լավ սովորի, այսինքն՝ ծնողի մոտ սկսում է ձեւավորվել գերազանցիկ սիրողոմ: Սակայն պետք է լինել համբերատար, քանի որ երեխաների համար միշտ չէ, որ հեշտ է նոր միջավայրին հարմարվելը: Ծնողը պետք է իմանա, որ իր երեխան տարբերվում է մնացած երեխաներից եւ ունի իր առանձնահատկությունը: Պետք է միանգամից երեխայից պահանջել ավելին: Պարզապես հարկավոր է համբերատարությամբ հետեւել փոքրիկի զարգացմանը:


Կարելի է հասկանալ՝ ո՞րն է երեխայի դպրոց գնալու նպատակը: Պետք է գիտակցել, որ երեխան գնում է դպրոց՝ ոչ թե գիտելիք ստանալու, այլ սովորելու, թե ինչպես կարելի է գիտելիք ձեռք բերել: Դպրոց գնալով՝ երեխան սովորում է ինտեգրվել շրջապատին, ձեռք բերել այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն կյանքում ավելի հեշտ կողմնորոշվել, խնդիրների լուծման այլընտրանքներ գտնել: Դրան ունենք մյուսն օգտակար էր, եւ այն կօգնի քեզ, սիրելի ծնող:

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ Է հիվանդի մահճակալին եւ հարցնում. - Դե՛, ասեք, խնդրեմ, ձեր ի՞նչն է ցավում: - Ոչ մի տեղս, բացի այն ոտքից, որի վրա նստել եք: Է.Յ. «Կրաստանի» ընթերցող Թիլիսի

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

- Թշնամին նա չէ, ով հասցնում է վիրավորանք, այլ նա, ով դա անում է կանխամտածված: ԴԵՍՈՎՐԻՏ
Ով կատարել է բարի գործ, թող լռի, եւ թող խոսի նա, ում համար արվել է բարի գործը: ՍԵՆԵԿԱ
Քաղաքականությունը մանր հարմարությունները զոհաբերելու սովորություն է:

ԹՈՍԱ ՋԵՖԵՐՍՈՆ
Գիմարը դատապարտում է ուրիշներին, խելոքը՝ իրեն, իմաստունը՝ ոչ ոքի:
Շ.Յ. «Կրաստանի» ընթերցող Թիլիսի



ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿՎԵՑ ՓԱՐԻԶԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 5-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ընդունեց Փարիզի Օլիմպիական խաղերին Հայաստանի հավաքականի մասնակից մարզիկներին, նրանց մարզիչներին և ֆեդերացիաների ղեկավարներին:



Հայաստանի վարչապետը շնորհակալություն հայտնեց նրանց՝ Հայաստանը Փարիզի Օլիմպիական խաղերին պատվով ներկայացնելու համար, և հավելեց, որ կառավարությունը փորձել է հնարավորն անել, որպեսզի հարմարավետ պայմաններ ստեղծի հավաքականի՝ Օլիմպիական խաղերին մասնակցելու առումով:

բազմաթիվ մրցաշարեր:

Ինչպես նշվեց հանդիպմանը, Հայաստանն Օլիմպիական խաղերին մասնակցել է 15 մարզիկով. երեքը զբաղեցրել են երկրորդ տեղը՝ նվաճելով արծաթե մեդալ, մեկը՝ երրորդ տեղը՝ բրոնզե մեդալ, մեկը՝ չորրորդ տեղը, երկու մարզիկ՝ հինգերորդ, մեկ մարզիկ՝ վեցերորդ, երեք մարզիկ՝ յոթերորդ և մեկ մարզիկ՝ իններորդ տեղը: Այսինքն՝ 12 մարզիկներն էլ եղել են տասնյակում: Ծանրամարտի Հայաստանի հավաքականն Օլիմպիական խաղերում, թիմային հաշվարկում, ոչ պաշտոնական, եղել է երկրորդը՝ զիջելով միայն Վրաստանի հավաքականին: Հունահռոմեական ոճի մարզաձեռնում Հայաստանի հավաքականն ընդհանուր թիմային հաշվարկում եղել է հինգերորդը:

Երեքը զբաղեցրել են երկրորդ տեղը՝ նվաճելով արծաթե մեդալ, մեկը՝ երրորդ տեղը՝ բրոնզե մեդալ, մեկը՝ չորրորդ տեղը, երկու մարզիկ՝ հինգերորդ, մեկ մարզիկ՝ վեցերորդ, երեք մարզիկ՝ յոթերորդ և մեկ մարզիկ՝ իններորդ տեղը: Այսինքն՝ 12 մարզիկներն էլ եղել են տասնյակում: Ծանրամարտի Հայաստանի հավաքականն Օլիմպիական խաղերում, թիմային հաշվարկում, ոչ պաշտոնական, եղել է երկրորդը՝ զիջելով միայն Վրաստանի հավաքականին: Հունահռոմեական ոճի մարզաձեռնում Հայաստանի հավաքականն ընդհանուր թիմային հաշվարկում եղել է հինգերորդը:

Հանդիպմանը քննարկվեցին Հայաստանում մարզական ենթակառուցվածքների բարելավմանը, հաջորդ Օլիմպիական խաղերին նախապատրաստվելուն, սպորտի զարգացման ուղղությամբ քայլերին վերաբերող հարցեր:

- Ընդհանուր առմամբ, այս ամառա-

ԱՌԱՅԻՆ ՈՒՂԻՂ ԳՎԵՐԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԳԻՆԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

Երեանի «Զվարթնոյ» օդանավակայանում կայացավ Ուրումչի-Երեան-Ուրումչի երթուղով առաջին չվերթի դիմավորման հանդիսավոր արարողությունը: Սեպտեմբերի 3-ից գործարկվելու են ուղիղ չվերթեր Հայաստանի և Չինաստանի միջև՝ վերոհիշյալ երթուղով: Ավելի ուշ կայացավ Երեանից դեպի Ուրումչի իրականացվող չվերթը:

Ուրումչին Չինաստանի հյուսիս-արևմուտքում, Ղազախստանի սահմանին մոտ գտնվող դարպասն է, որպեղից կարելի է շարունակել ճանապարհորդությունը դեպի Պեկին, Շանհայ և այլ քաղաքներ՝ ծանոթանալու Չինաստանի տարբեր շրջանների մշակույթին և բացահայտելու համագործակցության նոր հնարավորություններ: Չվերթի տեւողությունը 5 ժամ է:

ՀԱՅՎԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱՍ ԽՆԳԻՐՆԵՐ ԳՆԵ ԲԱՐՁՐԱՅՎԵԼ

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Գեորգ Պապոյանը, անդրադառնալով ռուսական լրատվամիջոցների այն հրապարակմանը, թե ռուսական խանութներում վաճառվող հայկական կոնյակի 90 տոկոսն անվտանգ չէ, հայտարարեց, որ, Ռուսաստանի Ղազնության գյուղատնտեսության նախարարը և ՌԳ անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության ղեկավարը հայկական կոնյակի հետ կապված որեւէ խնդիր չեն բարչրաչայնել:

Նրա խոսքով, էկոնոմիկայի նախարարության օրակարգում չափ կարելու տեղ է զբաղեցնում կոնյակի սպիրտի որակը:

- Հայաստանից պետք է արտահանվի իրապես կոնյակ և կոնյակի սպիրտ: Իմ օրակարգում այն չափ կարելու դերակատարում ունի: Ես անելու եմ ամեն-ինչ, որպեսզի վստահ լինենք, որ Հայաստանից դուրս եկող սպիրտը բացառապես խաղողի հոսմբ ունի: Սա Հայաստանի բրենդի և հայկական կոնյակի բրենդի հարց է,- եզրափակեց Պապոյանը:

ՀԱՅՎԱԿԱՆ ԱՏՈՍԱԿԱՅԱՆԸ ՎԹՈՐԱՅԻՆ ՌԵԺԻՍՏՐ ԱՆՉԱՏՎԵԼ Է ԷՆԵՐԳՈՂԱՍՍԱԿԱՐԳԻՑ

Հայաստանի ագրոմակայանը երկրի էներգահամակարգից անջատվել է համակարգում տեղի ունեցած վթարի հետեւանքով, որը տեղի է ունեցել կայծակի հարվածի պատճառով:

Էկոնոմիկայի նախարարության տեղեկագրությամբ, օգոստոսի 30-ին՝ ժամը 21:55-ի սահմաններում, Հայկական ագրոմակայանը վթարային կանգառի ռեժիմով անջատվել է էներգահամակարգից: Կանգի պատճառ է հանդիսացել կայծակի հարվածը, որի հետեւանքով կայանի անվտանգության համակարգերը կայանը բերել են անվտանգ կանգառի ռեժիմի: Անվտանգության համակարգերը գերզգայուն են և արչագանքում են ցանկացած իրավիճակի:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԳԱԿԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է ԸՆթայիկ տարվա սեպտեմբերի 2-ի դրությամբ, Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 60 սանտիմետր բարձրության վրա, ինչը 21 սանտիմետրով բարձր է մնում նախորդ տարվա նույն օրվա նիշից:

Ներկա դրությամբ, ոռոգման նպատակներով Սեւանա լճից բաց է թողնվել 111 միլիոն 944 խորանարդ մետր ջուր, իսկ այս տարվա ընթացքում, հունվարից մինչև սեպտեմբերի սկիզբն ընկած ժամանակահատվածում, Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 176 միլիոն 204 հազար խորանարդ մետր ջուր: 2024 թվականի օգոստոսի 2-ի համեմատ, լճի մակարդակը նվազել է 6 սանտիմետրով:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԳՐԹԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ



Գրքի տոնը վերադարձավ Երեւան. սեպտեմբերի 6-7-8-ը «Քաղաքը կարդում է» կարգախոսով անցկացվեց Գրքի երեւանյան միջազգային յոթերորդ փառատոնը:

Փառատոնը անցկացվեց Հայաստանի պատմության թանգարանի կամարաշարում: Փառատոնի հիմնական բաղկացուցիչ մասերից էր նաեւ գրական մրցույթը: Այս տարի, նախորդ տարվա համեմատ, դիմորդների թիվը կրկնակի ավելացել է: Մրցույթն անցկացվում է ամառում:

Փառատոնի համակարգման կազմակերպիչ, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանը նշեց՝ փառատոնն այս տարի առանձնանում է շատ յուրահատուկ նախաձեռնությամբ. երեք օր կցուցադրվի թանգարանային մեկ բացառիկ նմուշ՝ Միսաք Մեծարենցի մատուցած:

յին պատկերասրահում (Հանրապետության հրապարակ), իսկ փառատոնի շրջանակում իրականացվող գրքի տոնավաճառը, որտեղ գործեց 20-40 տոկոս պարտադիր զեղչ, կազմակերպվեց Հայաստանի ազգային պատկերասրահի և

«ԳԻՆՈՒ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը հյուրընկալում է ՄԱԿ Զբոսաշրջության (UN Tourism) կողմից կազմակերպվող հեղինակավոր «Գինու զբոսաշրջության համաշխարհային համաժողով»-ը:

Սեպտեմբերի 11-13-ը Հայաստանը լինելու է գինու զբոսաշրջության միջազգային քարտեզի կենտրոնում: 100-ից ավելի մասնակից շուրջ 40 երկրից համաժողովի շրջանակում կլինի Հայաստանում բացահայտելու տեղի գինու պատմությունը, զբոսաշրջային հնարավորությունները:

Հայաստանն էն ժամանելու միջազգային, ինչպես նաեւ տարբեր երկրների պետական կառույցների, տարածքային կառավարման կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրատվամիջոցներ, զբոսաշրջության ոլորտի մասնագետներ, գինու միջազգային փորձագետներ: Մասնակցության հայտ են ներկայացրել

տարբեր երկրներից՝ Պորտուգալիա, Արգենտինա, Ճապոնիա, Հնդկաստան, աֆրիկյան, եվրոպական երկրներ և այլն:

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գործադիր տնօրեն Ջարուհի Մուրադյանի խոսքով, Հայաստանում գինեգործության ոլորտը վերջին 15 տարվա ընթացքում վերածնունդ է ապրում: Ըստ նրա, շատ մեծ աշխատանք կա կատարելու, որ Հայաստանն աշխարհում դիրքավորվի որպես գինեգործական երկիր:

ԶԱՐԵՆ ՄԻՆԱՆՅԱՆ. «ՍՓՅՈՒՌԹԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀՈՍՔԸ ԿԱՅՈՒՆ Է»

Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեն Մինանյանի հայտարարությամբ, Սփյուռքից Հայաստան եկող քաղաքացիների հոսքը 2024 թվականին կայուն է, տարվա ընթացքում միտումն է ապես չի փոխվել, և այս պահին որեւէ փոփոխություն չեն էլ ակնկալում, եթե աշխարհում որեւէ լուրջ բան տեղի չունենա:

Ըստ նրա, Սփյուռքից դեպի Հայաստան եկող քաղաքացիների հոսքի մասով այս տարի պատկերը նույն է, ինչ 2023 թվականին:

Անդրադառնալով գրասենյակի առաջիկա ծրագրերի մասին հարցին՝ գլխավոր հանձնակատարը նշեց՝ առայժմ նոր ծրագրեր չունեն:

- Իրականացվող ծրագրերի մասով նշեմ, որ այն, ինչ ունենք, արդեն բավարար է, և դա նույնիսկ շատ մեծ աշխատանք է պահանջում: Շարունակական բնույթ է կրում մեր «ԻԳործ» ծրագիրը, այս պահին պիլոտային փուլում է նա-

եւ «ԻԳործ մարզեր» ծրագիրը: Պիլոտային փուլում է նաեւ «ԴիասՊոր» ծրագիրը, որը «ԻԳործ»-ի ավելի փոքր և թեթեւ տեսակն է այն իմաստով, որ չի պահանջում մարդկանց մեկ տարվա ներկայությունը Հայաստանում՝ այն նույնպես կամավորական սկզբունքներով ծրագիր է: Շարունակական է նաեւ երիտասարդ դեսպանների ծրագիրը, իսկ վերջերս ավարտեցինք այս տարվա «Քայլ դեպի տուն» ամառային ճամբարների փուլը,- նշեց Սինանյանը:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

15.09.2024 Խաչվե-ՍԵՊՏԵՄԲԵՐ չափայտի՝ պարսկական գերությունից երուսաղեմ վերադարձի եւ Գողգոթայում կանգնեցնան: Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվեբաց:

Շատ տեղեր Խաչվեբացը՝ «Արք-խեչը» ընկալում են որպես աշնանամուտ:

Խաչվեբացի հաջորդ օրը մեռելոց է: Այդ օրը եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ, կատարվում է հոգեհանգստյան կարգ, որից հետո այցելում են հանգուցյալների շիրիմներին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՅ ԵՐԿՐԻ ՖՈՒՏԲՈՒԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱՆՊԱՄՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 5-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Կորախիձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն ՈՒԵՖԱ-ի Ազգերի լիգայի մրցաշարի մեկնարկին հանդիպում ունեցան Վրաստանի ֆուտբոլի հավաքականի անդամների հետ:

Իրակլի Կորախիձեն ՈՒԵՖԱ-ի Ազգերի լիգայի հանդիպումներից առաջ հաջողություն մաղթեց ազգային հավաքականին:

Իրակլի Կորախիձեն հավաքականի խաղացողների հետ խոսեց աշխարհի առաջնության նախապատրաստության մասին եւ նշեց, որ հավատում է՝ երկիրը բազմիցս հպարտամալու է նրանց հաղթանակով:

Վրաստանի հավաքականը Ազգերի լիգայի երկու հանդիպում կանցկացնի՝ սեպտեմբերի 7-ին Միխայիլ Մեսխիի մարզադաշտում կընդունի Չեխիային, իսկ սեպտեմբերի 10-ին Տիրանայում կհանդիպի Ալբանիայի հետ:



ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԱՎԱՆԴԱԿԱՆ «ԹԲԻԼԻՍՈՒՐԱՆ» ԿԱՆՑԿԱՑՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-6-ԻՆ

Այս տարի Վրաստանի մայրաքաղաքի ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան», կնշվի հոկտեմբերի առաջին շաբաթվա վերջին երկու օրերին՝ 5-6-ին:

Տոնական միջոցառումները տեղի կունենան Օրբելիանիի հրապարակի տարածքում եւ «Ռիդե» այգում: Այնտեղ կներկայացվեն տարբեր ինստալացիաներ եւ դեկորացիաներ, ֆոտոգոտիներ, սպորտային եւ մշակութային տարածքներ, ցուցահանդեսային տաղավարներ: Կլինեն տարբեր ժանրերի կատարողների ելույթներ, թատերական ներկայացումներ, ժամանցային միջոցառումներ, «գրույցներ» բալկերում:

«Թբիլիսոբա»-ի շրջանակներում, կանցկացվեն նաեւ «Քաղցրավենիքի փառատոն», «Taste Tbilisi» սննդի փողոցային շուկա եւ այլ գաստրոնոմիական տոնավաճառներ:

«Թբիլիսոբա» տոնակատարության համար այս տարի կծախսվի 3,5 մլն լարի, նախորդ տարվա համեմատ 400 հազար լարիով ավելի:



Հիշեցնենք, որ «Թբիլիսոբան» աշնանային տոն է Վրաստանի մայրաքաղաքում, առնչվում է բերքահավաքին: Տոնը նշվում է 1979 թվականից:

ՄԻՍՈՆ ԿԻԼԱԶԵ

ՓԱՐԻԶ - 2024

ՊԱՐԱՕԼԻՄՊԻԿ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՈՒՆԱԿԱՆ ՍՊՈՐՏԻՍՏՆԵՐԻ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՆԳ ՄԵՂԱԼ ՄԵԿ ՈՍԿԵ, ԵՐԿՈՒԿԱՆ ԱՐՇԱՐԹ ԵՎ ԲՐՈՆՉԵ ՄԵՂԱՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԿՏԻՎՈՒՄ



Վաղը՝ սեպտեմբերի 8-ին, եզրագիծը կհատի Փարիզի 17-րդ ամառային պարաօլիմպիկ խաղերը:

184 երկրների 4400 մարզիկ-մարզուհիների մասնակցությամբ մարզական փառատոնի 20 մարզածեւում խաղարկվեց մեդալների 549 հավաքածու:

Վեց մարզածեւում 14 մարզիկով հանդես եկող Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցեց տարբեր արժողության հինգ մեդալ՝ պարատետիկայի մրցաշարի չեմպիոն է դարձել Գիգա Օչկիկիձեն, արծաթե մեդալներ են նվաճել պարաձուլդոյիստ Զուրաբ Զուրաբիանին եւ պարահրաձիգ Վլադիմիր Ծինճարաուլին, իսկ բրոնզե մեդալներ նվաճեցին պարաթեքվանդիստ Աննա Ջափարիձեն եւ սուսերամարտիկ Նինո Թիբիլաշվիլին:

Պարաօլիմպիկ խաղերին երեք մարզածեւերում երեք մարզիկներով հանդես եկող Հայաստանի հավաքականը, ցավոք, տուն վերադարձավ առանց մեդալների:

1	2	3	4	5	6	7	8	9
			10	11				
		12	13	14				
15			16					
	17		18					
19				20				
	21		22	23			24	
		25			26	27		
28		29		30				
31		32			33			
34	35	36			37			
	38			39	40		41	
42	43				44			
45				46			47	
48			49		50	51	52	53
		54			55			
56								
		57						
					58			

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Սկանդինավյան պետություն: 5.Հայաստանի մարզերից: 10.Պատ, քարե պարիսպ: 11.Կրկեսի մրցասպարեզ, բեմ: 12.Քառասնորյա ... պահել: 13.Տեսողությունից զրկվել: 15.Երաժշտական գործիք: 16.Անդերսենի հեքիաթներից «... տոկուն գինվորիկը»: 17.Ցուցական դերանուն: 18.«... որ բացվեց ղռներն հուստ» (Երգ «Կիլիկի»): 19.Ջրային տրամսպորտ: 20.Հատապտղի տեսակ: 21.Աղո՛Ֆ Չիլդերի սիրուհին ... Բրաուն: 22.Հայտնի Մեծ եղեռնի ամիսը: 25.Եզդիների երեք խմբերից մեկը: 26.Հովի.թումանյանի պոեմի հերոս: 28.Գինու կավե աման: 30.Արաքս գետի անվանումներից: 32.Սեւ կամ կարմիր հատապտուղ: 33.... աղամանդե քարերը: 34.«... կուգաս, դարիք բլբուլ» (Սայաթ-Նովայի երգերից): 37.Հայ բեմի մեծ վարպետ ... Ավետիսյան: 38.Դերերգ օպերայում: 39.Կարծես, ասես: 41.Դաղձ, անանուխ: 42.Կիսատ, պակաս: 44.Գագիկ Գինոսյանի պարային համույթը: 45.Ֆրանսիացի դերասանուհի ... Էմե: 46.Ծնունդով Թբիլիսիից, այժմ երեւանաբնակ երգիչ ... Կարապետյան: 48.Երեւանի պետական պարային համույթի ղեկավար ... Խանամիրյան: 50.Աշակերտի 45 րոպեի դպրոցում: 52.Արորի մաս: 54.Իտալացի երգահան Վինչենցո Բելլինիի օպերան: 55.Հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող եւ փիլիսոփա Շահան ...: 56.Վեցերորդ ծայրամիջը: 57.Լեհի մեծ կամ համամիութենական պիոներական կազմակերպության անդամ: 58.Դեղձից պատրաստած արեւելյան քաղցրավենիք:

ՈՐԿՂԱՆՑՆԱԾ. 1.Ֆրանսահայ պոետ, կոմպոզիտոր Շառլ Ազնավուրը: 2.Ռուսական Կայսրության թագուհի: 3.Պետություն Եվրոպայում: 4.Հովի.թումանյանի «...ի առումը» պոեմը: 5.Ցրել, փռել, բաց անել: 6.Շտապ, շուտ-շուտ: 7.Արեգակնային համակարգի մոլորակ: 8.Անգլիացի նշանավոր կինոդերասան Չառլի Չապլինի կինը: 9.Վրաց քաղաքական գործիչ ... Նաթելաշվիլի: 10.Հայաստանի Տավուշի մարզի հայտնի գյուղերից: 11.Դալար..., փխր..., հաստաբ...: 23.Պետքական, պետք եկող: 24.Հայ երգի Մեսրոպ Մաշտոցը: 25.Միսը աղալու միջոց: 26.Հայոց Սպարապետ Մխիթարի կինը: 27.Գյուղ Հայաստանի երեւան-Գյումրի ճանապարհին: 29.Վախ, երկյուղ: 30.Վրացական խաճապուրիի տեսակ: 31.«Ոսկեդարի» վրացի քաղաքական գործիչ, բանաստեղծ: 35.Մամիկոնյանների գաղափար: 36.Օրվա մաս: 40.«... կանգնի, լավ չես արել» (Խնկո-Ապր «Գայլն ու կատուն» առակից): 43.Գերմանական հայտնի քաղաք: 46.Անգլիացի մեծ գրող Ալ.Դյունայի գրական հերոս ... Դանտես կամ Գրաֆ Մոնտե-Քրիստո: 47.Քերթողահայր Խորենացու «Հայկ եւ ...» առասպելը: 49.Գուրդի, բուրդ: 51.Նար-Դոսի վիպակի հերոսուհի: 52.Վրաց գրող, գիտնական Սուլիսան ... Օրբելիանի: 53.«Ես ... դուրս գամ դեպ հրապարակ, Առանց քնարի, անգարդ խոսքերով» (Միքայել Առլանդյան):

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԳ ՀԱՄԱՐԻ ԽԱՉՔԱՆԻ ՊՍՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 7.Ստառիկա: 8.Պենզա: 9.Շվի: 10.Յալթա: 13.Չարագ: 18.Գեղի: 19.Աուտոդաֆե: 22.Սելեն: 23.Սատկած: 28.Նիցշե: 29.Պյուզո: 32.Շիա: 33.Արար: 34.Գալոպ: 37.Հրե: 39.Լուվր: 41.Ենոտ: 44.Ալոց: 46.Սերո: 47.Ջահ: 49.Խալ: 50.Բաբայան: 52.Շուտո: 54.Հունար: 55.Ռիչի: 56.Ատ: 57.Շիճուկ: 58.Լաքա:

ՈՐԿՂԱՆՑՆԱԾ. 1.Ֆայլ: 2.Լիկա: 3.Լաշա: 4.Տախ: 5.Անդրե: 6.Քանգի: 11.Ասու: 12.Թլուլ: 14.Ագուլի: 15.Աղվաշ: 16.Թան: 17.Գես: 20.Տելուր: 21.Դեկոր: 24.Անագ: 25.Կցել: 26.Ծերա: 27.Աշուր: 30.Յաբու: 31.Ջաիր: 35.Արես: 36.Որոր: 37.Հով: 38.Երջանիկ: 40.Վահան: 42.Ներու: 43.Տոյոտա: 44.Անարի: 45.Ոխառու: 48.Արու: 51.Բաշ: 52.Շիլ: 53.Տաք:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
 Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
 Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ
 Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԳԵՂՅԱՆ

ՔՅՅԵՈ ՅՈՆՁՅՅԵՄՈ: ՄՅՈՒՐՆՈ 0105, Ճ.ՃՄՐԵՅՐՆՈՆ ԳՅՅՅ 5,
 Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
 ԹՅՐ. Հեռ. 2990-739, 2990-774
 www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
 Գրանցման վկայական № 4 Կ - 1439
 «ԿՈՆՈՐ» հրատարակչություն

«ՅՅՅՅՅՅՅ»
 ՄՅՈՒՐՆՈ, ՆՅՅՅՅՅՅՅՅՅ
 «ՅՐԱՏԱՆ»
 Тбилиси, Грузия
 <VRASTAN>
 Georgia, Tbilisi
 Индекс 66445